ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«11» հուլիսի 2011թ.
գ. Նորակերտ

թիվ 98

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՌՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 11-ին կայացած ժողովի հաշվետվությունը՝ 2011 թվականի առաջին կիսամյակում ծավալած գործունեության վերաբերյալ:

Առդիր՝ 3 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատ. Կ. Առաքելյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 թ. ՀՈՒԼԻՍԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻՑ.

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2011 թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձեկ. Համայնքի ղեկավար Շ. Կարապետյան

Ժողովին մասնակցում էին 39 մարդ.

Համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը նախ և առաջ ժողովի մասնակիցներին իրազեկեց, որ Նորակերտ համայնքը 2010 թ. արդյունքներով Արմավիրի մարզում ճանաչվել է մարզի լավագույն համայնք իսկ համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը՝ լավագույն համայնքի ղեկավար, որը նա համարում է համայնքի ամբողջ ազգաբնակչության ձեռքբերումը և որի համար սրտանց շնորհավորում ժողովի մասնակիցներին:

Այնուհետև Շ. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց 2011թ առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ տարիներ շարունակ լուծում պահանջող առկա հիմնախնդիրներին , վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2011 թ առաջին կիսամյակում բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին՝ նշելով որ հաշվետու ժամանակաշրջանում զգալի դժվարություններ են առաջացել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, որը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով,որը հանրագումարում հանգեցրել է հողատարածքների մասսայական չմշակվելուն:

Հարկ եմ համարում նշել, որ չմշակվող հողատարածքների տեսակարար կշիռը այսօրվա դրությամբ կազմում է շուրջ 90.0 % :

Այնուամենայնիվ գյուղապետարանի աշխատակազմը ողջ ջանքերը կգործադրի սեփական եկամուտների հավաքագրման բյուջեով նախատեսված ցուցանիշները ապահովելու համար:

Մասնավորապես նշվեց, որ 2011 թ առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը եկամուտների գծով կազմում է 87.7. տոկոս, որից սեփական եկամուտների գծով՝ կազմում 47.3 տոկոս: :

Այնուհետև համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1.Մետաղապլաստե պատուհանների տեղադրում մանկապարտեզի շենքում:

2. Գյուղապետարանի շենքի մի հատվածի հիմնանորոգում, սան հանգույցի անցկացում«մետաղապլաստե պատուհանների և դռների տեղադրում:
3. Մանկապարտեզի հարակից տարածքի Բարեկամություն –Կոմիտաս հատ վածի պարսպապատում ուղիղ կտրվածքի քարով:
4. Մանկապարտեզի շենքի ճակատային հատվածին հարող տարածքի պարս- պապատում ուղիղ կտրվածքի քարով և մետաղյա ցանցով:
5. Մշակույթի տան շենքի ջրհորդանների տեղադրում և փլուզված անկյունա – քարերի շարում:
6. Գյուղապետարանի շենքի պատուհաններին և դռանը ճաղավանդակների տեղադրում, շերտավարագույրների անցկացում:
7. Մանկապարտեզի շենքի խոհանոցային հատվածի ընթացիկ վերա – նորոգում:
8. Նորակերտ-Զվարթնոց միջհամայնքային ճանապարհի փոսային նորոգում:
9. Համայնքի դպրոցի համար ձեռք է բերվել խոհանոցի սեղան աթոռների հավաքածու:
10.. Ընթացքի մեջ է և մոտ օրերս կավարտվի Նորակերտի մանկապարտեզի շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքները:

Նորմալ ձևով, սահմանված գրաֆիկով կազմակերպվում է աղբահանու – թյունը:

Ընթացիկ ժամանակաշրջանում դրամական օգնություն է ցուցաբերվել հա մայնքի սակավ ապահովված ընտանիքներին, մարզի կարկտահարությու - նից տուժած համայնքներին: :

Այնուհետև համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը դիմելով ժողովի մաս նակիցներին նշեց որ թող այն կարծիքը չստեղծվի թե համայնքում խնդիր- ներ չկան կան և շատ, այնպես որ մեր սուղ միջոցներով կատարված վերը նշված աշխատանքները առկա ցավոտ խնդիրների լուծման մի փորձ է միայն:

Մեզ մտահոգում է խմելու և ոռոգման ջրագծերի , գյուղամիջյան ճանա- պարհների անմխիթար վիճակը:

Հիմնովին վերանորոգման կարիք ունեն մշակույթի տան և մանկապար տեզի շենքերը, նորակառույց դպրոցը չունի մարզադահլիճ:

Դրանք այն հիմնախնդիրներն են ,որոնց լուծումը կապված է մեծ դրա- մական միջոցների ներդրման հետ և վեր է մեր ուժերից:

Հարկ համարվեց նշել որ չնայած այն հանգամանքին, որ Նորակերտ հա- մայնքը դասվում է մարզի ամենաաղքատ գյուղերի շարքին, սակայն առ այ- սոր համայնքում որևէ ներդրումային ծրագիր չի իրականացվել:

Հարակից ելույթում գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Վ. Քոչյանը նշեց որ ինքը անձամբ դրականորեն է գնահատում այն սերտ կապը որը ձևավորվել է ինչպես միջնակարգ դպրոցի այնպես էլ «Նորակերտի մանկա- պարտեզ» ՀՈԱԿ-ի կոլեկտիվների հետ :

Նորակերտի մանկապարտեզի տնօրեն Ս. Ասատրյանը ելույթ ունենալով նշեց, որ հատկապես այս տարի մեծ ուշադրություն է դարձվել մանկապար-

տեզին, ընթացիկ տարվա առաջին կիսամյակում միայն, մանկապարտեզի համար այնքան բան է արվել, որ չի արվել նախորդ տաս տարիներին միա – սին վերցրած, որի համար կոլեկտիվի անունից իր խորին երախտագիտությունը հայտնեց համայնքի ղեկավար Շ. Կարապետյանին:

Համայնքում մեծ խանդավառությամբ են նշվում տոնական բոլոր միջոցառումները;

Գյուղապետարանի ենթակայության հիմնարկների լավագույն աշխատողներին տրվել են շնորհակալագրեր, ինչպես նաև դրամական խրախուսանքներ:

Վերջում համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը հավաստիացնենք, որ այսուհետև կարվի հնարավոր ամեն ինչ իրականացնելու գյուղապետարանի առջև դրված խնդիրները:

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Շ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ